HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

ECOLUR
NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՄՈՂՈՒԼ

ԵՐԵՎԱՆ 2026

Սույն մոդուլը պատրաստվել է «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից «Քաղաքացիական հասարակության առաջնորդության և կենսաբազմազանության կառավարման ամրապնդումը Հայաստանում կայանալիք COP17-ի նախօրեին» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է «Հայնրիխ Բյոլ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ:

Մոդուլի մեջ արտահայտված մտքերը հեղինակինն են և չեն արտահայտում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետը:

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն մոդուլի նպատակն է 2026թ. հոկտեմբերի 19-30-ը Հայաստանում անցկացվելիք ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովին (CBD COP 17) ընդառաջ ներկայացնել ՀՀ հարուստ կենսաբազմազանությունը և կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման ոլորտում ՀՀ՝ միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները, ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքին վերաբերելի ՀՀ կենսաբազմազանության ազգային ծրագրով նախատեսված թիրախները, Ջերմուկի կենսաբազմազանությունը, մարտահրավերները, հնարավոր լուծումները:

Մոդուլի մշակման համար ուսումնասիրվել են համապատասխան կոնվենցիաները, (AM0000009) Ջերմուկ, (AM0000002) «Սևան» ազգային պարկ, (AM0000002) Գորհայք էմերալդ տարածքների թեկնածուների տարբերակները և դրանց վերաբերյալ հետագա փոփոխությունների ՀՀ առաջարկը, գնահատվել է համայնքի կենսաբազմազանության վրա ընդերքօգտագործման նախագծերի և այլ գործոնների հնարավոր բացասական ազդեցությունը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2026 թ. ապրիլի 3-ի թիվ 100-Լ հրամանը, ոլորտին առընչվող ՀՀ իրավական ակտեր:

II. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ CBD COP 17-Ը ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ

2026թ. հոկտեմբերի 19-30-ը Հայաստանը կհյուրընկալի[1] Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովը (CBD COP 17):

CBD COP17-ին Հայաստանում կքննարկվի 50-ից ավելի փաստաթուղթ: Կարևորագույն իրադարձությունը լինելու է Կունմին-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի իրականացման առաջին Գլոբալ վերանայումը (Global Review): Ակնկալվում է, որ CBD COP17-ը կվերածի այս վերանայման արդյունքները գործնական ուղեցույցների՝ մինչև 2030 թվականը գլոբալ հավակնությունների արագացված իրականացումն ապահովելու համար: CBD COP17-ի չորս հիմնական առաջնահերթություններն են.

1. Գլոբալ վերանայում՝ իրականացման առաջընթաց և հաշվետվողականություն
2. Ֆինանսներ և թվային գենետիկական հաջորդականության տվյալներ՝ ֆինանսավորում, Կալի հիմնադրամ (Cali Fund) և օգուտների բաշխում
3. Մասնակիցներ՝ բնիկ ժողովուրդներ, համայնքներ և շահառուներ
4. Սիներգիա՝ կենսաբազմազանություն, կլիմա, հողեր, ջուր:

III ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

[1] Decision adopted by the Conference of the Parties to the Convention on Biological Diversity on 1 November 2024 (https://www.cbd.int/doc/decisions/cop-16/cop-16-dec-27-en.pdf)

1. ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան ընդունվել է 1992 թ. մայիսի 22-ին՝ Նայրոբիում (Քենիա) և պաշտոնապես բացվել ստորագրման համար նույն թվականի հունիսի 5-ին՝ Ռիո դե Ժանեյրոյի «Երկիր» գագաթնաժողովում: Այն ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 29-ին: Կոնվենցիայի նպատակներն են.

- կենսաբանական բազմազանության պահպանում
- կենսաբանական բազմազանության բաղադրիչների կայուն օգտագործում
- գենետիկական ռեսուրսների օգտագործումից բխող օգուտների արդար և հավասար բաշխում:
- Հայաստանն այս կոնվենցիային միացել է 1993թ.: 2004թ. մարտի 16-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ վավերացվել է Կոնվենցիայի Կարթագենայի արձանագրությունը, որն ապահովում է գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների (ԳՄՕ) անվտանգ մշակումը, տեղափոխումը և օգտագործումը, որոնք կարող են ունենալ բացասական ազդեցություն կենսաբազմազանության վրա՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը վերաբերող ռիսկերը:
-
- 2026թ. մարտի 25-ին ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Կոնվենցիայի Նագոյայի արձանագրությունը, որն ապահովում է գենետիկական ռեսուրսների օգտագործումից առաջացող օգուտների արդար և հավասար բաշխում[2]:
-
  2022թ. դեկտեմբերի 19-ին ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի 15-րդ համաժողովի ժամանակ ընդունվեց Կունմին-Մոնրեալի կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակը (ԿՄԿ): Այն ներառում է 4 նպատակ 2050թ. համար և 23 թիրախ 2030թ. համար:

Նպատակներն են՝

1) Պաշտպանել և վերականգնել
2) Բարգավաճել բնության հետ ներդաշնակ
3) Արդարացիորեն բաշխել օգուտները
4) Ներդնել և համագործակցել:

Շրջանակի 23 թիրախներից 1-8-ն ուղղված են կենսաբազմազանության համար սպառնալիքների կրճատմանը, 9-13-ը՝ մարդկանց կարիքների բավարարմանը կենսաբազմազանության կայուն օգտագործման և օգուտների բաշխման միջոցով, 14-23-ն ուղղված են իրականացման և ներդրման համար գործիքներին և լուծումներին: Այն ուղենշային համաձայնագիր է, որը սահմանում է նպատակներ և կոնկրետ գործողություններ՝ մինչև 2050 թվականը դադարեցնելու կենսաբազմազանության կորուստը: Շրջանակի թիրախները ներառում են էկոհամակարգերի 30 տոկոսի վերականգնում, ցամաքի, ջրերի և ծովերի 30%-ի պահպանություն, ինվազիվ օտար տեսակների՝ ներմուծման նվազեցում մինչև 50%:

2. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիան (Բեռնի կոնվենցիա) ընդունվել է 1979 թ. սեպտեմբերի 19-ին Շվեյցարիայի Բեռն քաղաքում: Կոնվենցիայի նպատակն է ապահովել վայրի ֆլորայի ու ֆաունայի և նրանց

[2] https://www.arlis.am/hy/acts/223685

բնական միջավայրերի պահպանությունը՝ առանձնակիորեն կարևորելով այն տեսակները և բնական միջավայրերը, որոնց պահպանման համար անհրաժեշտ է համագործակցություն մի քանի պետությունների կողմից, ինչպես նաև խթանել նման համագործակցությունը:

Հայաստանը Կոնվենցիան վավերացրել է 2008թ. ապրիլի 14-ին, որն ուժի մեջ է մտել 2008թ. օգոստոսի 1-ից[3]:

Հայաստանը ներգրավված է Կոնվենցիայի կարևոր գործիքներից մեկում՝ Էմերալդ ցանցում, որի նպատակներից մեկն է առանձնացնել և պահպանել կենսաբազմազանության համար արժեքավոր տարածքները: Հայաստանը ներկայացրել է 23 էմերալդ թեկնածու տարածք, որոնք ընդգրկել են 1.033.719,5 հա, կամ երկրի տարածքի 34,7%-ը: Մի քանի տարի է՝ տեղի է ունենում այդ տարածքների վերանայման գործընթաց: «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի (EU4Environment) ծրագրի» շրջանակում Համաշխարհային բանկը պատրաստել է «Հայաստանում Էմերալդ ցանցի թեկնածու տարածքների վերանայման առաջարկություններ», ըստ որոնց առաջարկվում է 30 թեկնածու տարածք 23-ի փոխարեն, որոնց ընդհանուր տարածքը կկազմի 707,739.22 հեկտար կամ երկրի 23.8%-ը:

3. **«Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիա»-ն** (Բոննի կոնվենցիա) ընդունվել է 1979թ. հունիսի 23-ին Գերմանիայի Բոնն քաղաքում: Այն ուժի մեջ է 1983 թ-ից:

Կոնվենցիայի նպատակն է պահպանել միգրացվող վայրի կենդանիները, նրանց կենսամիջավայրերը և միգրացիոն ուղիներն ամբողջ աշխարհում: Այն գործում է ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) հովանու ներքո և կենսաբազմազանության պահպանության գլոբալ համակարգի կարևոր բաղադրիչ է:

Հայաստանն այս Կոնվենցիային միացել է 2006թ.: Այն ուժի մեջ է մտել 01.03.2011թ-ից:

4. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիան (Ռամսարի կոնվենցիա)[4] ընդունվել է 1971թ.: Կոնվենցիան ջրաճահճային տարածքների պահպանությանը նվիրված առաջին համաշխարհային բնապահպանական համաձայնագիրն է: Դրա հիմնական նպատակն է ջրաճահճային տարածքների պահպանությունն ու «խելամիտ օգտագործումը» (wise use)՝ կենսաբազմազանության և մարդկային բարեկեցության համար:

ՀՀ-ն կոնվենցիային միացել է 1993թ.: ՀՀ-ում ներկայում միջազգային նշանակության Ռամսարյան տարածք են ճանաչվել Անանա և Արփի լճերը, Խոր Վիրապի ճահճուտները:

[3] https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=signatures-by-treaty&treatynum=104
[4] https://www.unesco.org/en/legal-affairs/convention-wetlands-international-importance-especially-waterfowl-habitat

IV. ՀՀ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 2026-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2026 թ. ապրիլի 3-ի թիվ 100-Լ հրամանով հաստատվել է ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության նպատակները և 2026-2030 թվականների գործողությունների ծրագիրը: Ի տարբերություն ԿՄԿ-ի, Հայաստանը չի սահմանել 30 տոկոս պահպանության թիրախ, այլ նախատեսել է մինչև 2030թ. պահպանության տակ վերցնել երկրի տարածքի 20 տոկոսը. որի մեջ ներառվելու են բնության հատուկ պահպանվող տարածքները, անտառները, արդյունավետ պահպանության այլ տարածքներ:

Հրամանով սահմանված 30 թիրախներից Ջերմուկ համայնքի նկատմամբ կիրառելի են հետևյալ թիրախները՝

Թիրախ 1. ներառել կրիտիկական կենսամիջավայրերը տարածական պլանավորման մեջ

Թիրախ 5. պահպանել գլոբալ վտանգված տեսակները և կառավարել մարդ-վայրի կենդանիներ կոնֆլիկտը

Թիրախ 8. նվազեցնել Սևանա լճի էկոհամակարգի աղտոտումը, վերականգնել դրա էկոհամակարգի հավասարակշռությունը

Թիրախ 9. նվազեցնել Հայաստանում ջրային ռեսուրսների աղտոտումը

Թիրախ 10. բարձրացնել անտառային լանդշաֆտների դիմակայությունը կլիմայի փոփոխությանը

Թիրախ 11. ներդնել կայուն որսորդության փորձառություններ

Թիրախ 12. խթանել կայուն և գյուղատնտեսությունը

Թիրախ 13. կիրառել բնահեն լուծումներ

Թիրախ 14. խթանել բնակավայրերի, այդ թվում քաղաքների կանաչ զարգացումը

Թիրախ 15. ապահովել գենետիկական ռեսուրսների արդար հասանելիությունը և օգտագործումը

Թիրախ 16. բարձրացնել կենսաբազմազանության պահպության կարևորությունն ու նշանակությունը տեղականից մինչև ազգային մակարդակներում

Թիրախ 17. ներդնել բնապահպանական, սոցիալական և կառավարչական կարգավորումներ

Թիրախ 19. բարելավել թափոնների վերամշակման մակարդակը և խթանել կայուն սպառման ընտրության հնարավորություններ

Թիրախ 20. նվազեցնել սննդի գերսպառումը և սննդի թափոնների գոյացումը,

Թիրախ 22. նվազեցնել կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցությունները ,

Թիրախ 23. գույքագրել ներքին ֆինանսական միջոցները

Թիրախ 24. գույքագրել միջազգային ֆինանսական,

Թիրախ 28. խրախուսել հանրության մասնակցությանը կենսաբազմազանության վերաբերյալ հետազոտություններում և բարձրացնել բնապահպանական իրազեկվածության մակարդակը,

Թիրախ 29. ներգրավել համայնքներին բնապահպանական կառավարման մեջ

Թիրախ 30. Կենսաբազմազանության պահպանման ոլորտում ապահովել գենդերային հավասարությունը:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՈՒՍՏ, ԲԱՑԻ ՎՏԱՆԳՎԱԾ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը, լինելով Կովկասի տարածաշրջանի մաս, ճանաչված է որպես աշխարհի կենսաբազմազանության 36 թեժ կետերից մեկը: Կլիմայական պայմանները և բազմատեսակ լանդշաֆտները նպաստել են բարձր աստիճանի էնդեմիզմ ունեցող հարուստ կենսաբազմազանության առաջացմանը:

Հայաստանի տարածքում բնակվում են մոտ 3800 անոթավոր բույսեր, 4200 սնկեր, 685 քարաքոս, 428 ջրիմուռներ, 399 մամաուռ: Հայաստանի կենդանական աշխարը ներառում է շուրջ 17000-17500 կենդանի օրգանիզմներ, որոնցից 83 կաթնասուն, 353 թրչուն, 53 սողուն, 8 երկենցաղ, 39 ձկնատեսակ, և ավելի քան 11000 անողնաշար կենդանատեսակ:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են՝ 452 բուսատեսակ, 40 սնկատեսակ, 155 ողնաշարավոր կենդանի և 153 անողնաշար կենդանատեսակ:

Աշխարհում շարունակվող և արձանագրվող կենսաբազմազանության կորատից, անմասն չէ նաև ՀՀ-ն: Հանքարդյունաբերության և այլ ծանր արդյունաբերության տեսակների համար կառուցվող խոշոր ենթակառուցվածքները, հիդրոէներգետիկան, անտառհատումները, անտառային հրդեհները, գյուղատնտեսությունը, այդ թվում՝ արոտավայրերի չկարգավարված արածեցումը, ռեկրեացիան և զբոսաշրջությունը, կենցաղային և շինարարական թափոններով տարածքների աղտոտումը, վայրի ուտելի բուսատեսակների չկարգավորված հավաքչությունը, վայրի կենդանիների և թռչունների ապօրինի որսը, հիվանդություններն ու վարակները, ինվազիվ կենսատեսակների տարածումը, կլիմայի փոփոխությունն իրենց բացասական հետևանքն են թողնում կենսաբազմազանության վրա, կրճատելով նրանց թվաքանակը և փոխելով նրանց տեսակային կազմը:

VI. ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ջերմուկ համայնքի տարածքը գտնվում է Վայոց ձորի լեռնային հատվածում և ընդգրկում է Ջերմուկ քաղաքի շրջակա լեռնաշղթաները, գետահովիտները և ալպիական մարգագետինները: Մոտավոր սահմաններով ներփակված է Հյուսիսում՝ Ամուլսար լեռնազանգվածով և բարձր լեռնային մարգագետիններով, արևելքում՝ Վարդենիսի լեռնաշղթայի հարավային հատվածներով, արևմուտքից՝ Արփա գետի կիրճերով և լեռնային անտառներով, հարավում՝ Արփայի միջին հոսքի լեռնային էկոհամակարգերով: Համայնքի կազմում են՝ Ջերմուկ առողջարանային քաղաքը և Գնդեվազ, Կեչուտ, Կարմրաշեն, Հերհեր գյուղերը:

Համայնքի բնակչության թիվը կազմում է 9372 մարդ:

Ջերմուկ քաղաքի հանքային ջրերը դասվում են ածխաթթվային, հիդրոկարբոնատ-սուլֆատ-քլորիդային, նատրիում-կալցիում, մագնեզիումական ջրերի շարքին: Ջերմուկ

քաղաքում կան արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից ամենախոշորը «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ-ն է՝ հանքային ջրերի գործարանը (1949 թվական), քարհանքեր, ՓՀԷԿ-եր, պանրի գործարան, գործում են նաև տասնյակից ավելի հյուրանոցներ և առողջարաններ: Քաղաքի կոյուղաղատարը չունի մաքրման համակարգ:

Գնդեվազի բնակիչների թիվը 708 է: Բնակչությունը զբաղվում է անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, դաշտավարությամբ, և այգեգործությամբ:

Կեչուտի բնակչության թիվը 863 է: Բնակիչները հիմնականում զբաղվում են հացահատիկային ու կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Կարմրաշեն և Հեր-Հեր գյուղերը գյուղատնտեսական են:

Ջերմուկ համայնքի վարչական տարածքը կենսաբազմազանության կարևոր կենտրոն է Հայաստանում: Տարածքում առկա բուսական և կենդանական բազմազանությունն ունի բարձր էկոհամակարգային արժեք: Համայնքի տարածքը էկոլոգիական միջանցք է, որը կապում է Սյունիքի և Վայոց ձորի լեռնային կենսաբազմազանության գոտիները: Տարածքը ներառում է ալպիական լանդշաֆտներ, ժայռային լեռնային էկոհամակարգեր և լեռնային գետերի համակարգեր: Տարածքում առկա են բարձր կենսաբազմազանություն վտանգված տեսակներ, կարևոր էկոլոգիական միջանցք, բարձրալեռնային եզակի էկոհամակարգեր:

Բեռնի կոնվենցիայով սահմանվող կենդանական տեսակներից տարածքում պահպանվող հիմնական՝ տեսակներն են՝

- խոշոր կաթնասուններ՝ պարսկական ընձառյուծ (Panthera pardus), բեզոարյան այծ (Bezoar ibex), մոխրագույն գայլ (Grey wolf), գորշ արջ (Brown bear), հայկական մուֆլոն (Armenian mouflon)

- փոքր կաթնասուններ՝ Եվրոպական վայրի կատու (European wildcat), քարե մարտեն (Stone marten)

- կարևոր թռչնատեսակներ՝ մորուքավոր անգղ (Bearded vulture), ոսկեթև արծիվ (Golden eagle), Եվրասիական ճաղատ անգղ (Eurasian griffon vulture):

Կարևոր բուսական համակեցություններն են՝
- ալպիական մարգագետիններ
- լեռնային տափաստաններ
- ենթալպիական թփուտներ
- լեռնային գետերի ափամերձ բուսականություն

Հայտնաբերվել են նաև Կովկասի էնդեմիկ բույսերի տեսակներ:

Պաշտոնական տվյալներից բացի, այլ անկախ փորձագիտական գնահատումների համաձայն, տարածքում հայտնաբերվել են անհետացման եզրին գտնվող բազմաթիվ այլ կենդանատեսակներ և բուսատեսակներ՝ մասնավորապես.

Կաթնասուններ.

կովկասյան ընձառյուծ (Panthera pardus saxicolor), գորշ գայլ (Canis lupus), բեզոարյան այծ (Capra aegagrus), ջրասամույր (Lutra lutra), սովորական լուսան (Lynx lynx), գորշ արջ (Ursus arctos), խայտաքիս (Vormela peregusna), սովորական երկարաթև չղջիկ (Miniopterus schreibersii), սրականջ գիշերաչղջիկ (Myotis blythii), եռագույն գիշերաչղջիկ (Myotis emarginatus), հարավային պայտաքիթ (Rhinolophus euryale), մեծ պայտաքիթ (Rhinolophus ferrumequinum), փոքր պայտաքիթ (Rhinolophus hipposideros), մեհելիի պայտաքիթ (Rhinolophus mehelyi), հայկական մուֆլոն (Ovis orientalis)՝ ունի խոցելի կարգավիճակ ԲՊՄՄ կարմիր գրքի համաձայն:

Թռչնատեսակներ.

Երկնագույն ալկիոն (Alcedo atthis), գեղանի կռունկ (Anthus campestris), սովորական այծկիթ (Caprimulgus europaeus), մարգահավ (Crex crex), սիրիական փայտփոր (Dendrocopos syriacus), այգու դրախտապան (Emberiza hortulana), սովորական սամփրուկ (Lanius collurio), սևաճակատ շամփրուկ (Lanius minor), անտառային արտույտ (Lullula arborea), կապտափող սոխակ (Luscinia svecica), կարմրակտուց ճայ (Pyrrhocorax pyrrhocorax), ճուռականման շահիրիկ (Sylvia nisoria), կարմիր բադ (Tadorna ferruginea), մորուքավոր արծվանգղ (Gypaetus barbatus), գիժանգղ (Neophron percnopterus), քարարծիվ (Aquila chrysaetos), փոքր արծիվ (Aquila pomarina), գաճաճ արծիվ (Hieraaetus pennatus), օձակեր արծիվ (Circaetus gallicus), կրետակեր (Pernis apivorus), տափաստանային ճուռակ (Buteo rufinus), մարգագետնային մկնաճուռակ (Circus pygargus), սապսան (Falco peregrinus), տափաստանային հողմավար բազե (Falco naumanni), բվեճ (Bubo bubo), փոքր առտույտ (Calandrella brachydactyla):

Սողուններ.

Հայկական լեռնատափաստանային իժ Vipera eriwanensis (հոմանիշներ՝ Vipera ursinii, V. u. eriwanensis), պալլասի մագլցող սահնօձ Elaphe sauromates (հոմանիշներ՝ Elaphe quatorlineata, E. q. sauromates):

Ձկնատեսակներ. 1130 Aspius aspius; 6168 Luciobarbus comizo; 1146 Sabanejewia aurata

Անողնաշարավորներ. 6199 Euplagia quadripunctaria

Բուսատեսակներ. 4067 Echium russicum

Ջերմուկ համայնքի տարածքը ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 860 - Ն որոշմամբ[5] սահմանված ցանկում դիտարկվում են գայլ, շնագայլ, աղվես, լուսան, գորշուկ, քարակզաքիս, նապաստակ, վայրի խոզ, քարակաքավ, լոր, մեղվակեր,

[5] https://arlis.am/hy/acts/135650/latest

աղավնիներ, կտցարներ, սև կեռնեխ, դաշտային և տափաստանային արտույտներ, ջրլող թռչունների «Վայոց ձորի Եղեգիսի որսահանդակի» մաս:

Ջերմուկ համայնքի տարածքում առաջարկված է 33,045.29 հա մակերեսով, 27 թիրախ կենսամիջավայրով, ձկների 1, բույսերի 1, անողնաշարավորների 1. թռչունի 34, կաթնասունի 14 տեսակներով AM0000009 Ջերմուկ. տարածքի թեկնածությունը (առաջնային տարբերակով՝35,015.00 հա):

Համայնքի վարչական տարածքում է գտնվում Կեչուտի ջրամբարը, որն անմիջականորեն կապված է 156,321.48 հա մակերեսով 33 թիրախ կենսամիջավայրով, բույսերի 4, անողնաշարավորների՝ 2, թռչունների՝ 70 և կաթնասունների 6 տեսակներով AM0000002 «Սևանի» ազգային պարկ տարածքը (առաջին տարբերակում՝489,839.78 հա):

Համայնքում գործում են մի քանի փոքր հիդրոէլեկտրակայաններ (այսուհետ՝ ՓՀԷԿ):

Համայնքի վարչական տարածքի 113,0 հա-ում գործունեություն է իրականացնում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն, որն զբաղվում է Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի արդյունահանմամբ և հանքաքարի մշակմամբ:

VII. ԱՄՈՒԼՍԱՐԻ ՈՍԿՈՒ ՀԱՄՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՆՔԱՔԱՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐԸ

CBD COP17-ի կարևոր սկզբունքներից մեկը տնտեսական ծրագրերի, այդ թվում հանքարդյունաբերական, և կենսաբազմազանության ինտեգրված կառավարումն է: Այս տեսանկյունից հանքարդյունաբերության նախագծերը պետք է գնահատվեն ոչ միայն տնտեսական օգուտների տեսանկյունից, այլև բնության ամբողջականության, արգելոցների պահպանման, արձանագրված գործընթացների վճակագրական տվյալների և երկարաժամկետ էկոլոգիական ազդեցությունների նվազեցման տեսանկյունքից (այդ թվում ՝ ջրի, հողերի, էնդեմիկ հարուստ բնական միջավայրերի պաշտպանության) տեսանկյունից:

«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ին հատկացված հանքավայրի տարածքը 113,0 հա է: Ազդակիր համայնքներն են Ջերմուկ համայնքը (Ջերմուկ քաղաք, Գնդեվազ բնակավայր), Զառիթափ համայնքի Սարավան, Սարալանջ, Ուղեձոր բնակավայրերը և Գորհայք համայնքը: Ծրագիրը նախատեսում է ոսկու քվարցիտային հանքավայրի բաց շահագործում և ոսկու կորզում ցիանիդային մեթոդով: Այս մեթոդներն առանձնանում են իրենց բարձր ռիսկերով՝ հատկապես թթվային ջրերի արտանետման և ծանր մետաղների ներհոսքի տեսքով ջրամբարներում ու գետերի հոսքերում:

Ծրագրի հաստատումից ի վեր կատարվել են միջազգային և տեղական փորձագետների բազաբնույթ ուսումնասիրություններ, գնահատումներ և փորձագիտական եզրակացություններ, որոնք վերաբերվում են տարածքի կենսաբազմազանության վրա Ծրագրի հնարավոր ռիսկերին:

Ծրագիրը 2016 թ. ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) ԲՖ-35 դրական եզրակացություն:

Ծրագրի ՇՄԱԳ-ի վերանայման պաշտոնական հիմքեր ստեղծվեցին դեռևս 2018 թվականին ՀՀ կառավարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում կատարված պաշտոնական ստուգումներով, որոնց կազմում էին նաև WWF-Հայաստանի մասնագետները: Ստուգումներից հետո տեսչական մարմինը գրություն է ուղարկել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ խնդրելով կասեցնել հաստատված ՇՄԱԳ դրական եզրակացությունը, քանի որ տարածքում հայտնաբերվել են անհետացման եզրին գտնվող, Հայաստանի Կարմիր գրքում գրանցված և հատուկ պահպանության կարիք ունեցող նոր կենսատեսակներ (Ոզնաթուփ մեխակ cantholimon caryophylaceum Boiss.) և ՝ ապոլոն տեսակի թիթեռ (Parnassius apollo): Ըստ պահանջի՝ 2016թ. ՇՄԱԳ-ը զգալիորեն թերի է եղել և պատշաճ կերպով հաշվի չի առել կենսաբազմազանությունը և այլ ռիսկերը, և առկա է նոր ՇՄԱԳ իրականացնելու ապացուցված անհրաժեշտություն: Հետագայում այն հաստատվեց նաև ԷԼԱՐԴ ընկերության և ԱՄՆ-ում գործող ՏՐԿ-ի կողմից՝ ՀՀ կառավարության պատվերով իրականացված ստուգումներով[6], ըստ որի Ծրագրի ՇՄԱԳ հաշվետվությունը պատշաճ անդրադարձ է կատարել միայն գորշ արջին և Մատնունի ծիրանավորին, մինչդեռ մյուս տեսակների համար ներկայացրել է ավելի քիչ սպառիչ և որոշ դեպքերում՝ անբավարար տեղեկատվություն, իսկ առանձին դեպքերում կիրառել է սխալ մեթոդաբանություն: Նույն ստուգումների եզրակացության մեջ առաջարկվում է կատարել Ծրագրի նոր ՇՄԱԳ և մինչ այդ խորհուրդ չի տրվում հանքարդյունաբերության նախագիծ սկսել:

Չնայած նոր ՇՄԱԳ պահանջելու բոլոր հիմքերին, Հայաստանի կառավարությունը հետագայում որոշեց կանաչ լույս տալ նախագծին, որն ավելի շատ քաղաքական որոշում էր, քան լավ փաստարկված և օրինական եզրակացություն: Ավելին, 2026թ.հոկտեմբերի 10-ին պաշտոնապես ազդարարվեց հանքի շահագործման և վերամշակման մասին:

18.03.2020թ. «ԷկոԼուր» տեղեկատվական, «Հայաստանի անտառներ», «Կանաչ Հայաստան» ՀԿ-ները և CEE Bankwatch Network միջազգային ցանցը՝ ի դեմս կենսաբազմազանության անկախ փորձագետ Անդրեյ Ռալևի՝ Բեռնի կոնվենցիայի քարտուղարություն բողոք է հղել[7] : Բողոքում ներկայացվել է, որ ՀՀ կառավարության կողմից անտեսվել են Էմերալդ թեկնածու երեք՝ «Ջերմուկ», «Գորհայք» և «Սևան» ազգային պարկ» տարածքների՝ բուսական և կենդանական աշխարհների վրա՝ Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի զգալի ազդեցությունները: Բեռնի կոնվենցիայի բյուրոն 2022 թվականի ապրիլին կայացած նիստում ընդունած որոշմամբ իր մտահոգությունն է հայտնել Հայաստանում նախատեսվող Էմերալդ ցանցի տարածքների էական կրճատման կապակցությամբ և կրկին հորդորել է իշխանություններին պարզաբանել, թե երբ վերանայված ցուցակը պատրաստ կլինի և կներկայացվի քարտուղարություն: Բյուրոն իր մտահոգությունն է հայտնել նաև Ամուլսարի ոսկու հանքավայրի ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցության նոր գնահատման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև՝ նշել «Ջերմուկ» ազգային պարկի ստեղծման

[6] https://media.business-humanrights.org/media/documents/Independent_3rd_party_Assess_ELARD.pdf?fbclid=IwY2xjawU5t-hleHRuA2FlbQIxMQBwZG9mBXNydGMGYXBwX2lkDDM1MDY4NTUzMTcyOAABHtgSuTNR55YQBZkUgYKUR5T0QCGbFMoaHSK1TohUtqMzao_qmzLJws9B0eyO_aem_jvD_eiSwoStNRVrJQ8MdwA

[7] https://www.ecolur.org/files/uploads/2020/Complaint%20to%20Bern%20convention/complaintformamulsararm.pdf

անհրաժեշտության մասին, որը պետք է ներառի Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի բոլոր տարածքները:

2023թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը Ստրասբուրգում կայացած Բեռնի կոնվենցիայի կոմիտեի 43-րդ նիստում[8] ՝ հաշվի առնելով, որ Ամուլսարի ծրագիրը կարող է բացասաբար ազդել Կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող կենսատարածքների ու տեսակների վրա՝ անկախ այն բանից՝ ներառված են դրանք Էմերալդ ցանցում, թե ոչ, տրվել են հետևյալ գնահատականները և առաջարկները՝

1. ՀՀ կառավարությունը պետք է դադարեցնի Ամուլսարում ոսկու հանքի հետ կապված աշխատանքները:
2. Հարկ է վերանայել Ամուլսարի հանքարդյունաբերական ծրագրի ՇՄԱԳ-ը, փաստացի՝ նոր ՇՄԱԳ իրականացնել՝ հաշվի առնելով կենսաբազմազանության մասին նոր հայտնագործությունները, տեղական գիտնականների և քաղաքացիական հանրության փորձագիտական կարծիքները, ինչպես նաև միջսահմանային ազդեցությունների հնարավորությունը:
3. Պետք է արագացվի «Ջերմուկ» ազգային պարկի ստեղծումը, որը նախատեսված էր դեռևս 2012 թվականից և ներառում էր Ամուլսար լեռը:
4. Ամուլսարին և Էմերալդ ցանցին վերաբերող գործընթացները չպետք է վարվեն փակ դռների հետևում, ինչպես արվում է վերջերս, այլ անհրաժեշտ է ներգրավել քաղաքացիական հասարակությանը:
5. Կոնվենցիայի իրականացումը վերահսկող կոմիտեին խիստ մտահոգում է նաև իրավապաշտպանների, լրագրողների և անկախ փորձագետների դեմ զրպարտության մեղադրանքով դատական հայցերի աննախադեպ մեծ թիվը: Նման գործերը համարվում են «հանրության մասնակցությունը խոչընդոտելու նպատակով հարուցված ռազմավարական վարույթներ»:
6. Կոմիտեն վերահաստատել է իր թիվ 208 և թիվ 157 հանձնարարականները և հորդորել ՀՀ կառավարությանը Էմերալդ ցանցի փոփոխություններ իրականացնելիս առաջնորդվել դրանցով և անհրաժեշտության դեպքում հայցել Կոմիտեի տեխնիկական աջակցությունը:
7. Բեռնի կոնվենցիայի կոմիտեն ցանկություն է հայտնել այց կատարելու Հայաստան՝ տեղում իրավիճակը գնահատելու համար, ինչին ՀՀ կառավարությունը բացասաբար է արձագանքել:

2025թ. Հայկական հասարակական կազմակերպությունների անունից Անդրեյ Ռալևը Բեռնի քարտուղարություն ուղարկեց քաղաքացիական հասարակական կազմակերպությունների նոր հիմնավորումներ, մասնավորապես, Ծրագրի նոր ՇՄԱԳ-ի իրականացման համար իրավական հիմքերի, 2020 թվականին վերակազմավորումից անմիջապես հետո «Լիդիան»-ի բաժնետոմսերի 12,5 տոկոսը՝ ՀՀ կառավարությանը նվիրելու արդյունքում առաջացած շահերի նոր բախման հավանականության, ընդերքօգտագործման թույլտվությունների վերաբերյալ որոշումների կայացման համար նախկին պատասխանատու պետական պաշտոնյաների կոռուպցիայի բազմաթիվ դեպքերի առկայության վերաբերյալ: Հատուկ անդրադարձ է կատարված 2018 թվականին Ամուլսարում WWF փորձագետների կողմից հայտնաբերված Apollo թիթեռին և

[8] https://rm.coe.int/misc-e-2023-final/1680ad9230

Acantholimon caryophyllaceum-ին, որոնք կարող են հանդիսանալ նոր ՇՄԱԳ-ի հիմք, գործընթացներին, ոչ կառուցողական միջավայրով պայմանավորված, քաղաքացիական հասարակության մասնակցության ձևական բնույթին, և բազմաթիվ այլ հիմնավորումների: Միաժամանակ, քարտուղարությանն առաջարկվել է CBD COP-17-ին ընդառաջ ՀՀ կառավարությանը տալ հատուկ ազդակ Էմերալդ ցանցի պաշտպանության ու արդյունավետ կառավարման, «Ջերմուկ» ու «Տաթև» ազգային պարկերի ստեղծման և այդ պահպանվող տարածքներում վնասակար գործունեության դադարեցման (ներառյալ հանքարդյունաբերությունը) վերաբերյալ:

Նամակով առաջարկվում է այս հարցերը հաշվի առնել 2026 թվականի ապրիլին նախատեսվող Բեռնի կոնվենցիայի Բյուրոյի նիստում:

2026 թվականի ապրիլի 7-ի նիստում Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի բյուրոն իշխանությունների և դիմումատուի կողմից ներկայացված վերջին զեկույցների քննարկման արդյունքում ՀՀ շրջակա միջավարի նախարարություն է ներկայացրել նամակ, որտեղ նշվում է, որ ի գիտություն է ընդունել իշխանությունների տրամադրած տեղեկատվությունն այն մասին, որ Ամուլսարի ծրագրի իրականացման տարածքում ներկայացված չեն Էմերալդ թեկնածու տարածքների՝ զգալի չափով կրիտիկական տեսակներ, և որ տեղամասում առկա և Բեռնի կոնվենցիայով պահպանվող մի քանի տեսակ, որոնք ենթակա են մանրակրկիտ մոնիտորինգի: Բյուրոն կրկին դիմել է ՀՀ իշխանություններին, որպեսզի նախքան օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների մեկնարկն իրականացվի Ամուլսարի ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նոր ՇՄԱԳ: Միաժամանակ, կոչ է արվել ՀՀ իշխանություններին COP-17-ին ընդառաջ ստեղծել «Ջերմուկ» ազգային պարկը, ավարտել Էմերալդ ցանցի վերաբերյալ խորհրդատվական գործընթացները և ներկայացնել Էմերալդ տարածքների նոր սահմանների տվյալների բազան՝ հնարավորություն տալով այն քննարկելու Բեռնի կոնվենցիայի կենսաախարհագրական սեմինարում:

Կոչ է արվել իշխանություններին ոչ ուշ, քան 2026 թվականի հուլիսի 31-ը ուղարկել առաջընթացի հաշվետվություն, որը պետք է ներառի վերը նշված տեղեկատվությունը և ցանկացած այլ համապատասխան թարմացում, որպեսզի այն քննարկվի 2026 թվականի սեպտեմբերի 22-24-ը Ստրասբուրգում Բյուրոյի 2026 թվականի աշնանային հանդիպմանը:

Հայտատուի՝ ՀԿ-ների համար սահանվել են նույն ժամկետները:

VIII. ԱՄՈՒԼՍԱՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՋԵՐՄՈՒԿԻ ԷՄԵՐԱԼԴ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՅԼ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ

Ամուլսարի Ծրագիրը կարող է բացասաբար ազդել Բեռնի կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող կենսատարածքների ու տեսակների վրա: Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը և նրա ենթակառուցվածքները գտնվում են կենսաբազմազանության առումով կարևոր վայրերից մեկում՝ ներառյալ «Կարևորագույն թռչնաբանական տարածքը» (IBA), «Էմերալդ տարածքը» (Emerald Site) և «Կարևորագույն կենսաբազմազանության տարածք» (KBA): Այն ապրելավայր է ավելի քան 248 տեսակի բույսերի, որոնցից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում, 60 տեսակ կաթնասուն

կենդանիների, 12 տեսակ սողունների, 2 տեսակ երկկենցաղների և 5 տեսակ ձկների համար:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2026թ. ապրիլի 3-ի թիվ 100-Լ հրամանով[9] հաստատված մի շարք գործողություններ առնչվում են տարածքի կենսառեսուրսների պահպանության ոլորտին, մասնավորապես՝ հայկական մուֆլոնի պոպուլյացիայի վերականգման ծրագրի նախաձեռնում, մարդ-վայրի կենդանիներ կոնֆլիկտի դեպքերի գրանցման, գույքագրման և քարտեզագրման ամբողջական համակարգի ստեղծում, մարդ-վայրի կենդանիներ կոնֆլիկտի կառավարման և/կամ մեղմման մեխանիզմների ստեղծում, մարգագետինների և արոտավայրերի կառավարման պլանների կազմում, սակայն դրանք չեն կարող չեզոքացնել Ծրագրի ազդեցության ռիսկերը:

Ծրագրի իրականացումը կհանգեցնի լուրջ ազդեցությունների.

ա) AM0000009 Ջերմուկ տարածքի վրա /ալպիական և ենթալպիական մարգագետինների խաթարում, Կարմիր գրքի բուսատեսակների ոչնչացում, կենդանատեսակների միգրացիոն ուղիների խաթարում, գիշատիչ թռչունների և խոշոր կաթնասունների ոչնչացում կամ տարածքից հեռացում/: Սա հատկապես վտանգավոր է այն տեսակների համար, որոնք օգտագործում են Ամուլսարի լեռնային միջանցքը՝ օրինակ, պարսկական ընձառյուծը/Persian leopard և բեզոարյան այծը/Bezoar ibex

բ) «Սևանի» ազգային պարկ» տարածքի վրա /ծանր մետաղների հնարավոր միգրացիա ջրային համակարգով, ջրի որակի վատացում, ձկնատեսակների և ջրային թռչունների կենսամիջավայրի փոփոխություն (Այս տեսակները լայն տարածքներ են պահանջում և զգայուն են բնակավայրերի մասնատման նկատմամբ):

գ) Կառաջացնի տարածքի ջրային համակարգերի աղտոտում /Ամուլսարը գտնվում է երկու կարևոր՝ Արփա և Որոտան ջրային ավազանների միջև և հանքավայրի շահագործման ընթացքում հնարավոր է ծանր մետաղների արտահոսք, մակերեսային ջրերի աղտոտում: Սա կարող է ազդել նաև Սևանա լճի ջրահավաք ավազանի վրա, քանի որ Արփա գետը ներգրավված է Սևանա լճի ջրահավաք ավազանում/:

դ) Կարող է պարունակել թթվային դրենաժի վտանգ: Ոսկու արդյունահանման գործընթացում սուլֆիդային ապարների արդյունահանման և վերամշակման գործընթացում կարող է առաջացնել երկարաժամկետ թթվային հանքային դրենաժ: Դրա հետևանքով կարող են առաջանալ՝ ծանր մետաղներով հարուստ ջրեր, հողի և ջրի երկարաժամկետ աղտոտում, ստորերկրյա և մակերևույթային ջրային էկոհամակարգերի՝ այդ թվում գետերի և ջրամբարների աղտոտում: Այս ռիսկը համարվում է ամենալուրջը բարձրլեռնային հանքավայրերի համար/:

ե) Կունենա փոշու և աղմուկի ազդեցություն: Բաց հանքավայրերի շահագործումը ենթադրում է փոշու արտանետումներ և պայթեցումների աղմուկ: Սա կարող է ազդել հատկապես թռչունների վրա, օրինակ մորուքավոր անգղի/ Bearded vulture և ոսկեթև

[9] https://environment.gov.am/api/assets/aec1869b-4354-4df9-9d8e-3eff8998a526

արծիվ) (Golden eagle) /Այս տեսակները զգայուն են մարդու գործունեության նկատմամբ/։

զ) Կառաջացնի կենսաբանական միջանցքի խախտում /Ամուլսարի լեռնային համակարգը կենսաբանական միջանցք է՝ կապելով Սյունիքի և Վայոց ձորի լեռնային էկոհամակարգերը։ Հանքի զարգացումը կարող է խզել կենդանիների շարժման ուղիները, նվազեցնել գենետիկական փոխանակումը պոպուլյացիաների միջև/։

IX. ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

1. Ամուլսարի ծրագրի իրականացումը / Ջերմուկ առողջարանային քաղաքի և վարչական տարածքի կենսաբազմազանության կորուստ, լանդշտաֆի փոփոխություն, մակերևույթային և ստորերկրյա ջերի աղտոտում. . . . /
2. Վայրի կենդանիների ապօրինի որսը և ձկնորսությունը, ինչպես նաև որսորդների կողմից որսի կանոների չպահպանումը։
3. Ռեկրեացիան և զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունն և սննդարդյունաբերությունը, (Հողերի և էկոհամակարգերի ոչ կայուն օգտագործում՝ դեգրադացիա, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքար ոչ օրգանիկ և ոչ կենսաբանական մեթոդների կիրառմամբ), ինչի արդյունքում առաջանում է կենսամիջավայրերի խաթարում: Գյուղատնտեսական նպատակներով կատարվող ջրառի արդյունքում տուժում են գետերի հուները, որի պատճառով ոչնչանում են ափամերձ և ջրային էկոհամակարգերի տարրերը, հատկապես՝ ձկնատեսակներն ու նրանց կերի բազան: Գյուղատնտեսության զարգացման նպատակով օգտագործվող պարարտանյութերը ներթափանցում են գետեր կամ լճեր՝ վտանգելով կենսաբազմազանությունը:
4. Գյուղատնտեսական կենդանիների չկանոնակարգված արածեցումը /այդ տարածքներում հանգեցնում է բնական սերմնային վերականգնման խաթարման/։
5. Անտառհատումները և անտառային հրդեհները, /ազդեցությունը երկարաժամկետ է և հանգեցնում է անտառի կազմի և ծառուտների լրիվության խախտման, անտառի ստորին գոտու կենսաբազմազանության տեսակների վտանգման, անտառային էկոհամակարգերի հողապաշտպան և ջրակարգավորիչ գործառույթների նվազման, կենդանատեսակների և բուսատեսակաների ուղղակի ոչնչացման, վայրի կենդանիների միգրացիոն ուղիների խաթարման/։
6. Կենսառեսուրսների գերօգտագործումը/ ուտելի խոտաբույսերի և դեղաբույսերի չհամակարգված հավաքչության արդյունքում տեսակների պոպուլիացիաների նվազում/։
7. Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործումը /էկոհամակարգերի խախտում, ձկնուղիների խաթարում, ձկների ոչնչացում, բուսականության չորացում, պատվարներում ջրի ճահճացում/։
8. Տարածքի աղտոտումը կոմունալ-կենցաղային չմաքրված հոսքաջրերով։
9. Ռազմական գործողությունները /2022թ. Ջերմուկ համայնքի վրա ադրբեջանական հարձակման արդյունքում օկուպացվել է «Ջերմուկ» ջրաբանական արգելավայրի մի մասը, ինչպես նաև հրդեհվել են անտառային ծածկույթի որոշակի հատվածներ/։

XI. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Սահմանել Ջերմուկ համայնքի վարչական տարածքի հիմնական կենսամիջավայրերը:
2. Խրախուսել համայնքում վայրի կենսաբազմազանության տեսակների վրա հիմնված կայուն գործունեությունների, արտադրանքների և ծառայությունների զարգացումը՝ առաջնություն տալով ավանդական կայուն օգտագործման ձևերին:
3. Համայնքային զարգացման պլաններով նախատեսել էկոլոգիական միջանցքների պահպանման և երկարաժամկետ մոնիթորինգի ու հաշվետվողականության պարտավորությունների դրույթներ:
4. Համայնքի զարգացման պլաններում նախատեսել կրիտիկական կենսամիջավայրերի տարածական պլանավորման բաղադրիչ:
5. Համայնքում պարբերաբար իրականացնել կենսաբազմազանության պահպանության վերաբերյալ իրազեկվածության արշավներ՝ միջոցառումների ժամանակ ապահովելով գենդերային հավասարությունը:
6. Համայնքի վարչական տարածքում ստեղծել մարդ-վայրի կենդանի կոնֆլիկտի դեպքերի գրանցման, գույքագրման և քարտեզագրման համակարգ, ինչպես նաև մարդ–վայրի բնություն կոնֆլիկտի արձագանքման մեխանիզմներ:
7. Համայնքի բնակավայրերում ներդնել կանխարգելիչ միջոցների՝ ցանկապատերի հովվաշների, անվտանգ աղբահանության, համայնքի բնակավայրերի անասնագոմերի պաշտպանության և այլ բնապահպանական լուծումների պրակտիկա:
8. Ստեղծել գյուղատնտեսական և անասնապահական վնասների գնահատման թափանցիկ համակարգ:
9. Մշակել վայրի կենդանիներից եկող վնասների փոխհատուցման կամ կանխարգելման աջակցության համայնքային մեխանիզմներ՝ներառելով դրա հաշվետվողականության թափանցիկության բաղադրիչ:
10. Համայնքի բնակավայրերի բնակիչներին ներգրավել վայրի կենդանիների պահպանության ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում:
11. Պատրաստել և հաստատել կովկասյան/պարսկական ընձառյուծի, բեզոարյան այծի, պահպանության համայնքային պլաններ:
12. Համայնքում ներդնել կայուն որսորդության պրակտիկաներ:
13. Համայնքի բնակավայրերի բնակիչներին ներգրավել վայրի կենդանիների պահպանության համայնքային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում
14. Ջերմուկ առողջարանային քաղաքում կառուցել կոմունալ-կենցաղային կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայան:
15. Համայնքի տարածքում նախատեսվող գործունեությունների ՇՄԱԳ փաստաթղթերի հասարակական լսումների ժամանակ նախաձեռնողներից պահանջել ոչ միայն առանձին կենսաբազմազանության, այլև ամբողջ լանդշաֆտի փոխկապակցվածության գնահատում:
16. Պահանջել Ամուլսարի Ծրագրի նոր ՇՄԱԳ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավելով տեղական և միջազգային ոլորտային անկախ փորձագետների՝ պնդելով նաև պաշտպանվող տարածքների մոնիտորինգի խստացված համակարգի ներդրում, ինչպես նաև հանքի և մոտակա կենսաբազմազանության կարևոր տարածքների միջև բուֆերային գոտիների սահմանում:

17. Ամուլսարի Ծրագիրն իրականացնող ընկերությունից պահանջել ծրագրի ազդեցության գնահատում այգեգործության և տուրիզմի վրա։